

ջերս նորոգուած է և հոն կը բնակին վանականներ: Մինչև այսօր հոն կ'երևնան ԺԲ. դարու որմանկարներ, որ կը ներկայացնեն Յիսուսի սատանայէն փորձուիլը: Այս թուականին Քառասնեկի Անապատը կը վերաբերէր Ս. Գերեզմանի կրօնաւորներուն՝ որ կը կոչուէին Քառասնեկի Անապատի Եղբայրներ:

Ս. Քարայրը ելլելու ճանապարհը՝ թէև շատ չահագրգռական, բայց վերելքը յոգնեցուցիչ է: Ս. Քարայրին մէջ իւր ուխտաւորաց կը կարգացուի Աւետարանի մէկ հատուածը (Ղուկ. Գ. 1-13):

Նոյն տեղէն երեսուն վայրկեան հեռու կը գտնուի լեռ մը՝ որ կը կոչուի Տոբա և որ արաբերէն ձեռագիրի մը մէջ կոչուած է Ճեպեղ-եղ-Տոբ: Ս. Խարիթոն Փռանի մենարանը թողլէ վերջ հոն հաստատուեցաւ և անոր հետեւեցան ուրիշ մենակեացներ: Նոյն լեռան զագաթին վրայ Ը. դարուն արդէն հաստատուած է մատուռ մը, որուն կողակին մնացորդները մինչև հիմակ կ'երևան: Ճէպէլ-էլ-Տուք այցելած է ուսու Գանիէլ կրօնաւորը և տեսած է եկեղեցի մը, որ շինուած է այն տեղը՝ ուր երկնային զօրաց պետ Ս. Միքայէլ խօսակցած է Յիսուսի հետ: Փոկասն ալ կը յիշէ զայն Քառասնեկի Անապատին դիմացի բարձրութեան վրայ (Bar. gd. էջ 272-273):

Միջին դարուն հոն ցոյց կը տրուէր երկրորդ վայր մը որ կը կապուի Փրկչին փորձութեան հետ: Քառասնեկի Անապատը (Quarantania = Jébel Kuruntul) ցոյց կուտային ԺԲ. դարուն, իբր վայր մեր Փրկչին քառասնօրեայ պահեցողութեան (Մատթ. Գ.): Seawulf (1102), սակայն, կը դնէ փորձութեան «բարձր լեռը» Երիքովէն երեք մղոն հեռու՝ Գալիլիայի ուղղութեամբ: Fétellus (1150) Quarantanianի տեղը Երիքովէն երկու